ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK"S REGION
GYUMRI MEDICAL CENTER
CJSC

Հայաստանի Հանրապետություն
Գյումրի, Գ.Նժդեհի փ., 3/3
Էլ/հասցե՝ gyumrimc@gmail.com
Հեռ. - (0312) 3-03-11

Republic of Armenia
Gyumri st.G.Nzhdeh 3/3
E-mail: gyumrimc@gmail.com
Phone: (0312) 3-03-11

N 0985 « 23 » օգոստոս 2024թ.

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ տնօրեն
Լ. Փնջոյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի պարոն Փնջոյան

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի հետ 05.04.2024 թվականին կնքել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-4 ծածկագրով բժշկական պարագաների ձեռքբերման պայմանագիր:

Սույն թվականի օգոստոսի 16- ին ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի N03//07445-2024 գրությամբ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ծանուցվել է «Էսզեթ Ֆարմա», «Էսզեթ Ֆարմ» և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունների փոխկապակցվածության մասին : Գրությամբ ծանուցվել է նաև , որ «Էսզեթ Ֆարմա» ՍՊ Ընկերությունը 2023 թվականի մայիսի 06-ից մինչև 2025 թվականի հունիսի 20-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բացի այդ, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն

Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝

121. Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Տվյալ դեպքում «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունը մասնակցության հայտ ներկայացնելով ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16 ծածկագրով գնման ընթացակարգին, ներկայացրել է հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, որով հայտնել և հավաստել է , որ ընկերության և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Առաջնորդվելով կնքված պայմանագրի 8.3 կետով. «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է» և հաշվի առնելով այն փաստը , որ Պայմանագրի շրջանակներում ամբողջությամբ չի մատակարարվել՝ ***«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է 05.04.2024 թվականի «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ –ի հետ կնքված ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-4 պայմանագիրն ամբողջությամբ:***

Հիմք ընդունելով 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից:

Կից ներկայացվում է ՀՀ Շիրակի Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի կողմից ներկայացված գրությունը:

Առդիր՝ 1 ֆայլ

Հարգանքով՝

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Ն. Իսահակյան